ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

12 **փետրվարի** 2019 **թվական**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/1
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 1-ԻՆ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 57 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, խորհրդականները, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, քաղաքապետի մամուլի քարտուղարը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի տեղակալը, քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների և վարչական շրջանների ղեկավարները:

Նիստին ներկա էին ՀՀ ԶԼՄ-ի ներկայացուցիչներ:

Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը ներկայացրեց Երևանի ավագանու 2019 թվականի փետրվարի 12-ի նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու 2-րդ նստաշրջանի 1-ին նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևանի ավագանու 2-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:
3. Երևան քաղաքի ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N5-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:
4. Երևան քաղաքի ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N9-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:
5. «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին:
6. Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:
7. Երևանի քաղաքապետի 2019 թվականի փետրվարի 7-ի N259-Ա որոշումը և «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին:

1. **ԼՍԵՑԻՆ -** Երևանի ավագանու 2-րդ նստաշրջանի 1-ին նիստի օրակարգը հաստատելու մասին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 50 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 50, դեմ՝ 0 , ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

2. **ԼՍԵՑԻՆ** - Երևանի ավագանու 2-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատելու մասին:

Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը հայտնեց, որ, ղեկավարվելով Երևանի ավագանու կանոնակարգի 96-րդ կետով, Երևանի ավագանու 2-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովը ձևավորելու նպատակով խմբակցությունները ներկայացրել են առաջարկություններ՝ հաշվիչ հանձնաժողովի կազմում ավագանու հետևյալ անդամների թեկնածություններն առաջադրելու համար.

- ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն՝ Էդուարդ Ավետիսյան,
- ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն՝ Լյուդմիլա Սարգսյան,
- ԼՈՒՅՍ խմբակցություն՝ Անի Խաչատրյան

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել Երևանի ավագանու երկրորդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը.

1. Էդուարդ Ավետիսյան – Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն
2. Լյուդմիլա Սարգսյան – Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն
3. Անի Խաչատրյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցություն

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 50 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ - 50
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

3. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N5-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

ԶԵԿՈՒՅԵՑ - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար Սուրեն Էյրամջյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N5-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրել Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Գայանե Մելքոմ Մելքոմյանին:

2. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 10-ի «Երևան քաղաքի ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրելու մասին» N 5-Ա որոշումը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 52 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝52, դեմ՝0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

4. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N9-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

ԶԵԿՈՒՅԵՑ - Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար Սուրեն Էյրամջյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N9-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրել Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Հայկ Հովհաննիսյանին:

2. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 10-ի «Երևան քաղաքի ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրելու մասին» N 9-Ա որոշումը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 53 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝53, դեմ՝0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

5. **ԼՍԵՑԻՆ** - «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին:

ԶԵԿՈՒՅԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գոշ Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Դավիթ Խաչատրյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Միքայել Մանրիկյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

3. Հռիփսիմե Առաքելյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ ««Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1.Արման Անտոնյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2.Միքայել Մանրիկյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

3. Սուրեն Էյրամջյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար

Ամփոփիչ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Սարգսյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել «Երևանի կենդանաբանական այգի» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 57 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝54, դեմ՝0, ձեռնպահ՝3

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

6. **ԼՍԵՑԻՆ** - Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեց.

1.Էռնեստ Ավանեսով- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը և քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Ս.Օհանովի փողոցի հ.20 շենքի հ.16՝ 44.6 քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 08.10.2018թ. հ.08102018-01-0283 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Արփինե Սամվելի Սիրադեղյանին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 57 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝57, դեմ՝0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

7. **ԼՍԵՑԻՆ** - Երևանի քաղաքապետի 2019 թվականի փետրվարի 7-ի N259-Ա որոշումը և «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Խաչիկ Հակոբյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 6 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Իզաբելլա Աբգարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
2. Գրիգորի Երիցյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
3. Էռնեստ Ավանեսով- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
4. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար
5. Հռիփսիմե Առաքելյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ
6. Հայկ Միրզոյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Խ. Հակոբյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Երևանի քաղաքապետի 2019 թվականի փետրվարի 7-ի N259-Ա որոշումը և «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Օվսաննա Հովսեփյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար Դավիթ Խաժակյանը:

«Երևանի քաղաքապետի 2019 թվականի փետրվարի 7-ի N259-Ա որոշումը և «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել՝

1) Երևանի քաղաքապետի 2019 թվականի փետրվարի 7-ի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N 259-Ա որոշումը,

2) «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 51 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 51, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն

Երևանի քաղաքապետ Հ.Մարությանի առաջարկությամբ որոշվեց Երևանի ավագանու հերթական նիստը գումարել 2019 թվականի մարտի 19-ին, ժամը 11.00-ին:

ԸՆԴՄԻՋՈՒՄ.

Նիստը վերսկսվեց ժամը 12.30-ին:

Երևանի ավագանու անդամների բանավոր հարցերին տրվեցին պատասխաններ /աղագրությունը կցվում է/:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Կազմեց՝
Ն. Ղուկասյան